ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (հունիս ամսվա վերջի դրությամբ)









2023թ հունիսի 30-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 289,7 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 2.5 %-ով, 2022թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 5.8 %-ով, իսկ 2021 թվականի հունիսի 30-ի նկատմամբ՝ նվազելով՝ 2.4 %-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 79.2 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022 թվականի դեկտեմբերի 31-ի նկատմամբ, 2.8 %-ով, նվազելով 2022թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 6.4 %-ով, իսկ 2021թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 2 %-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 210.5 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3 %-ով, 2022թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 4.9%-ով, իսկ 2021թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 9.2%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 11 մլրդ 103,9 մլն ԱՄՆ դոլար աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 4.4 %-ով, 2022թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 11,8 %-ով, իսկ 2021թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 25.2 %-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 10 մլրդ 559.0 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 4.7%-ով, 2022 թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 12.5 %-ով, իսկ 2021թ. հունիսի 30 -ի նկատմամբ՝ 25,7%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 544,9 մլն. ԱՄՆ դոլար նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.2%-ով, 2022թ հունիսի 30-ի նկատմամբ աճելով 0.6%-ով, իսկ 2021թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 16.4 %-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 276.6 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.9%-ով, 2022թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 6.4 %-ով, իսկ 2021թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 26 %-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 802,5 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 9,2%-ով, 2022թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 28.,5%-ով, իսկ 2021թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 66.1 %-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 210.5 մլրդ ՀՀ դրամ, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3 %-ով, 2022թ. հունիսի 30-ի նկատմամբ 4.9 %-ով, իսկ 2021թ.հունիսի 30-ի նկատմամբ՝ 9.2 %-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5 մլրդ 893.2 մլն ԱՄՆ դոլար, նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.02 %-ով, 2022թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 1 %-ով, իսկ 2021թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 5.1%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 4 մլրդ 665,9 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2021թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 11.3 %-ով, 2022թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 35.7%-ով, իսկ 2021թ հունիսի 30-ի նկատմամբ՝ 112.9%-ով,

12) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 554.9 մլն ԱՄՆ դոլար նվազելով՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1,2%-ով, 2022թ. հունիսի 30-ի նկատմամբ աճելով 0,6 %-ով, իսկ 2021թ. հունիսի 30-ի նկատմամբ՝ 16,4 %-ով:

ԱԺԲԳ









ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2023թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 442.7 մլն ԱՄՆ դոլար նվազելով 2022թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 1.4 %-ով, աճելով 2022թ.-ի հունիսի 30-ի նկատմամբ՝ 2.9 %-ով, իսկ 2021թ. հունիսի 30-ի նկատմամբ նվազելով՝ 2.3 %-ով:

2023թ. հունիսի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 78.35 %, ինչը ավել է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.73 տոկոսային կետով, 2022թ. հունիսի 30-ի ցուցանիշից պակաս է 0.39 տոկոսային կետով, 2021թ. հունիսի 30-ի ցուցանիշից ավել է 0.91 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 21.36 %, ինչը պակաս է 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ 0.78 տոկոսային կետով, 2022թ. հունիսի 30-ի համեմատությամբ ավել է 0.44 տոկոսային կետով, իսկ 2021թ. հունիսի 30-ի համեմատությամբ պակաս է 0.79 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.29%, ինչը 0,01 տոկոսային կետով պակաս է 2022 դեկտեմբերի 31-ի ցուցանիշից, 2022թ. հունիսի 30-ի ցուցանիշից պակաս է 0.05 տոկոսային կետով, իսկ 2021թ. հունիսի 30-ի ցուցանիշից պակաս է 0.12 տոկոսային կետով:

2023թ. հունվար-հունիսին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

1) տոկոսավճարները կազմել են 116.82 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 19.96 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 29.69 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 72.72 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 12.13մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 19.58 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 43,.79 մլրդ դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 7.51 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 9.8 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2023թ. հունվար-հունիսին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 130.49 մլրդ դրամ, ինչը ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ 15.41 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 298,55 մլրդ դրամով:

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 159.17 մլրդ դրամ, ինչը ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 42.38 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 75.23 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -28.68 մլրդ դրամ, ինչը պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 30.39 մլրդ դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 373.78 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2023թ. հունվար-հունիսին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 70.58 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 104.6 %-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 92 %-ով,

2) արտաքին վարկերի մարման նպատակով վճարվել է 121.29 մլն դոլարի մայր գումար, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 7.5 %-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 8 %-ով,

3) ստացվել են 48.72 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 54.3 %-ով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է՝ 0.5 %-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման և մարման նպատակով վճարվել է 191.87 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 30.2%-ով, իսկ 2021 թ, ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 28.7 %-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2023թ. հունիսի 30-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 676.6 մլրդ դրամ, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. հունիսի 30 -ի և 2021թ. հունիսի 30-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 180.3, 328.9 և 639.5 մլրդ դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3073 օր, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 131 օրով, 2022թ. հունիսի 30-ի համեմատությամբ պակաս է 519 օրով, իսկ 2021թ. հունիսի 30-ի համեմատությամբ պակաս է 1027 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2023թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 6.75 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.46 տոկոսային կետով, 2022թ. հունիսի 30-ի համեմատությամբ ավել է 1.58 տոկոսային կետով, իսկ 2021թ. հունիսի 30-ի համեմատությամբ ավել է 2.37 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2023թ. հունիսի 30-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 3,25 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի, 2022թ. հունիսի 30-ի և 2021թ. հունիսի 30-ի համեմատությամբ համապատասխանաբար մեծ է 0.63 , 1.75 և 2.08 տոկոսային կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 14,8 2 %, ինչը 2022թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 1.77 տոկոսային կետով, 2022թ. հունիսի 30-ի համեմատությամբ՝ 3.25 տոկոսային կետով, իսկ 2021թ. հունիսի 30-ի համեմատությամբ՝ մեծ է 7.95 տոկոսային կետով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 81.93 %, ինչը 2022թ . դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 2.4 տոկոսային կետով, 2022թ. հունիսի 30-ի համեմատությամբ՝ 5 տոկոսային կետով, իսկ 2021թ. հունիսի 30-ի համեմատությամբ՝ 10.03 տոկոսային կետով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2023-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (2021-2023թթ. հունիս ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2023-2025թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 7-10 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2023թ հունիսի 30-ի դրությամբ կազմել է 7.4 տարի: Այս ցուցանիշը 2022թ. հունիսի 30-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից պակաս է 0.8 տարով, իսկ 2021թ. հունիսի 30 -ի ցուցանիշից՝ 1.4 տարով;

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2023թ. մայիսի հունիսի 30-ի դրությամբ կազմել է16 %, որը 2022թ. հունիսի 30-ի և 2021թ. հունիսի 30-ի մակարդակներից մեծ է համապատասխանաբար՝ 6,1 և 3,8 տոկոսային կետերով:

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2023թ.հունիսի 30-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 84.1%, լողացող տոկոսադրույքով՝ 15.9 %: Ընդ որում, 2023թ. հունիսի 30-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2022թ. հունիսի 30-ի ցուցանիշից ավել է 0.5 տոկոսային կետով, իսկ 2021թ. հունիսի 30-ի ցուցանիշից ավել է 1.6 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 30%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2023թ. հունիսի 30-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 55,8 %, ներքին պարտք՝ 44.2 %: Ընդ որում, 2023թ.հունիսի 30-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2022թ. հունիսի 30-ի և 2021թ. հունիսի 30-ի ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 7.6 և 18.3 տոկոսային կետերով: